հավելված 3
«Անելիք Բանկ» ՓԲԸ վարչության
2017 թվականի սեպտեմբերի 14-ի N333-L որոշման

______________ Ռ.Մելիքյան

## *"Թաուեր Փրոփերթիս" ՍՊԸ-ից անշարժ գույքի ձեռքբերման նպատակով հիփոթեքային վարկերի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ*

| | Վարկառուից/համավարկառուից պահանջվող փաստաթղթերի ցանկ և դիմումի ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվություն | Ձեռքբերում | Ներկայացման ձևը և վաղեմության ժամկետը՝ մինչև յուրաքանչյուր փուլում տվյալ փաստաթուղթը ներկայացնելը | Բանկում պահպանման ձևը |
|---|---|---|---|---|
| | **I. Փուլ (հայտի ուսումնասիրության (վերլուծության) և հաստատման համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր)** | | | |
| 1 | Վարկ ստանալու դիմում-հայտ | v | բնօրինակ | բնօրինակ |
| 2 | Անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 3 | Հանրային ծառայությունների համարանիշ | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 4 | **Ամուսնու (կնոջ) տվյալների վերաբերյալ փաստաթղթեր** | | | |
| 4.1 | Ամուսնության վկայական | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 4.2 | Ամուսնու (կնոջ) անձը հաստատող փաստաթուղթը (եթե վարկառուն/համավարկառուն ամուսնացած է) | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 4.3 | Ամուսնու (կնոջ) մահվան դեպքում՝ մահվան վկայական | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 4.4 | Ամուսնալուծության վկայական ամուսնալուծության դեպքում | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 5 | Երեխաների (առկայության դեպքում) անձը հաստատող փաստաթղթեր | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 6 | Անշարժ գույք(երի)ի սեփականության վկայական(ներ) | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 7 | Անկախ գնահատող կազմակերպության կողմից տրամադրված գնահատման տեղեկատվական նամակ(տեղեկագիր)՝ ձեռքբերվող անշարժ գույքի նախագծի վերաբերյալ (գրավ 1), և անշարժ գույքի նախնական գնահատման տեղեկանք՝ գրավադրվող բնակելի անշարժ գույքի վերաբերյալ (գրավ 2) | v | բնօրինակ, 30 օր | բնօրինակ |
| 8 | Տեղեկանք կառուղապատողից ձեռքբերվող անշարժ գույքի վերաբերյալ, որը պետք է պարունակի ձեռքբերվող գույքի արժեքը և բնութագիրը (հասցեն, հարկը, մակերես), | v | բնօրինակ | բնօրինակ |
| 9 | **Վարկառուի/համավարկառուի եկամուտները հավաստող փաստաթղթեր*** | | | |
| 9.1 | Տեղեկանք(ներ) աշխատավայրից: Տեղեկանք(ներ)ը պետք է պարունակի տեղեկություններ աշխատավարձի, վարկառուի զբաղեցրած պաշտոնի և տվյալ կազմակերպությունում աշխատանքային ստաժի վեաբերյալ: Տեղեկանքը պետք է տրված լինի կազմակերպության ձևաթղթի վրա, այն տրամադրելու ամսաթվի նշումով, ստորագրված և կնիքված լինի կազմակերպության կողմից: Բանկը կարող է պահանջել նաև աշխատավարձի ստացումը հավաստող բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշտության դեպքում): | v | բնօրինակ, 15 օր | բնօրինակ |
| 9.2 | Վարձակալության պայմանագիր՝ կնքված օրենքով սահմանված կարգով | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 9.3 | Տեղեկանք ֆինանսական կազմակերպությունից վարկի դիմումի ընդունման օրվանը նախորդող առնվազն 6 ամսվա (ցանկալի է մեկ տարվա) ընթացքում ստացված պարբերական փոխանցումների վերաբերյալ, բանկային հաշվից քաղվածք | v | բնօրինակ, 15 օր | բնօրինակ |
| 9.4 | Վճարովի աշխատանքի կատարումը կամ ծառայությունների մատուցումը հիմնավորող փաստաթղթեր (Ծառայությունների մատուցման պայմանագրեր, տեղեկանք, հայտարարագրեր՝ տրված ֆիզ. անձանց կողմից) | v | բնօրինակ | Պայմանագրերը պատճե (սքանավորված), մնացած փաստաթղթերը՝ բնօրինակ |
| 9.5 | Տեղեկանք կենսաթոշակ' երկարամյա ծառայության (Ոստիկանության, պաշտպանության նախարարության, քրեակատարողական և այլ համապատասխան մարմինների աշխատակիցներ, մանկավարժներ, դատավորներ և այլն) կերակրողին կորցնելու և այլն (բացառությամբ տարիքային կենսաթոշակի) ստացման վերաբերյալ | v | բնօրինակ | բնօրինակ |
| 9.6 | Ձեռնարկատիրական կամ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող հաճախորդների համար փաստաթղթերի ցանկ | | | |
| | **II. Փուլ (վարկի ձևակերպման համար հաճախորդից պահանջվող փաստաթղթեր)** | | | |
| 10 | Վարկառուի և կառուցապատողի միջև կնքված անշարժ գույքի ձեռքբերման իրավունքի պայմանագիրը | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 11 | Տեղեկանք ՀՀ ԿԱ Կադաստրի պետական կոմիտեի կողմից անշարժ գույքի գրավադրված կամ այլ տիպի արգելանքի տակ չլինելու մասին (Միասնական տեղեկանք) | v | բնօրինակ | բնօրինակ |
| 12 | Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպության կողմից տրամադրված անշարժ գույքի վերջնական գնահատման ակտ՝ գրավադրվող բնակելի անշարժ գույքի վերաբերյալ (գրավ 2) | v | բնօրինակ, 30 օր | բնօրինակ |
| 13 | Անշարժ գույք(երի)ի սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր | v | բնօրինակ | պատճե (սքանավորված) |
| 14 | Իրավաբանական անձ վաճառող(ներ)ի դեպքում՝ իրավասու մարմնի որոշումը գույքն օտարելու մասին, գործարքն իրականացնող անձի անձնագիրը, ՀՎՀՀ-ն, ՀՀ պետ. ռեգիստրի վկայականը և կանոնադրությունը | v | պատճե (էլեկտրոնային կամ թղթային) | պատճե (սքանավորված) |
| 15 | Սեփականության վկայականի տրման հիմքեր (սեփականաշնորհման որոշումներ, առքուվաճառքի պայմանագիր, դատարանի վճիռներ և այլ) բացառությամբ շին. թույլտվություն, նախագիծ, վճարման անդորրագրեր, ավարտական ակտ | v | պատճե (էլեկտրոնային կամ թղթային) | պատճե (սքանավորված) |
| | **III. Փուլ (Այլ փաստաթղթեր )** | | | |
| 16 | Կառուցապատող ընկկերության կողմից տրված բանկային երաշխիք՝ անհրաժեշտության դեպքում, | v | բնօրինակ | բնօրինակ |
| 17 | Ձեռքերվող անշարժ գույքի (գրավ 1) ավարտվածության աստիճանների վերաբերյալ ակտ | v | բնօրինակ | բնօրինակ |

*Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր*

* *Սույն ցանկի 9-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են ըստ հաճախորդի կողմից ստացվող եկամուտների տեսակի (առնվազն մեկը կամ մի քանիսը կամ բոլորը միաժամանակ):*

** *Եթե գրավադրման ենթակա անշարժ գույքը գրավադրված է այլ կազմակերպությունում (մինչև 23.07.2016), ապա պահանջվում է հաջորդող գրավի ձևակերպման թույլտվությունը՝ տրված կազմակերպության կողմից*

*** *Եթե գրավադրվող գույքի սեփականատերն անչափահաս է, ապա պահանջվում է նաև.*
*1. ծննդյան վկայական կամ անձը հաստատող փաստաթուղթ,*
*2. օրինական ներկայացուցիչների (ծնողներ, որդեգրողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև համաձայնություն խնամարկյալի գույքը (բաժինը) վաճառելու և (կամ) գրավ դնելու և գրավ դրված գույքի (բաժնի) վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու մասին (14-18 տարեկան երեխաների դեպքում),*
*3. խնամակալության և հոգաբարձության մարմնից թույլտվություն խնամարկյալի գույքը (բաժինը) վաճառելու և (կամ) գրավ դնելու և գրավ դրված գույքի (բաժնի) վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու մասին կամ նման գործարքի իրականացմանը երեխայի օրինական ներկայացուցչի կողմից համաձայնություն տալուն:*

**** *Եթե գործարքի կողմերից որևէ մեկի փոխարեն հանդես է գալիս լիազորված անձ, ապա պահանջվող փաստաթղթերի ցանկը ներառում է նաև նոտարական կարգով վավերացմամբ (կամ դրան հավասարեցված) Բանկի համար ընդունելի լիազորագիրը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթեր*

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի ձեռքբերման դեպքում, այն փաստաթղթերը, որոնց Բանկը տիրապետում է կարող են չպահանջվել հաճախորդից (6,7,8,9,11,13,14 կետերում նշված փաստաթղթերը)